ԾՐԱԳԻՐ

ՔԱՀԱՆԱՅԱՑՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ

Ա. Քահանայացուներ ընտրութիւնը.

1. *Իւրաքանչիւր հայ-լուսաւորչական համայնք, քաղաքներում և գիւղերում, որչափ էլ փոքրաթիւ լինի, կարող է իւր սեպհական քահանայ ունենալ։*

2. *Երկրորդ քահանայի խնդիր կարող է յարուցանել այն համայնքը, որն ունի* 250—300 *ծուխ (մատաղաբաժնով), իսկ այնուհետև իւրաքանչիւր աւելացած* 150 *ծուխը կարող է ունենալ նոր քահանայ։*

3. *Եթէ համայնքը քահանայի կարիքորութիւն ունի՝ համախօսականով դիմում է ուղղակի միայն վիճակային Կոնսիստորիային, ցանկութիւն յայտնելով իրանց քահանայացուի ձեռնադրութեան համար և միաժամանակ ուղարկելով քահանայացուի ուսման սահմանուած վկայականը համաձայն սոյն կանոնների* 16, 17 *և* 18-*րդ յօդուածների և վկայական գործակալից, թէ համայնքը քանի ծխից է բաղկացած ու քանի քահանայ ունի։*

Ծանօթութիւն. ա) Եթէ Վիճ. Կոնսիստորիային չէ ուղարկուած քահանայացուի սահմանուած ուսման վկայականը, այդ դէպքում համայնքի խնդիրը մերժւում է Կոնսիստորիայի կողմից։

բ) Եթէ քահանայացուն նախ քան ընտրութիւնն ունի միայն Բ-րդ կամ Գ-րդ դասարանի վկայական առանց լրացուցիչ քննութեան վկայականի, Վիճ Կոնսիստորիայն ընթացք է տալիս ընտրութեան գործին, ապա ընտրութեան գործերը ստանալուց յետոյ պահանջում է նաև քահանայացուի լրացուցիչ քննութեան վկայականը համաձայն 16-*րդ յօդուածի։*

4. *Վիճ. Կոնսիստորիայն ժողովրդի խնդիրը ստանալուց մինչև երկու շաբաթ պարտաւոր է տեղական գործակալի միջոցով համայնքին ժողովի հրաւիրել՝ իրանց ցանկացած քահանայացուին ընտրելու։*

Ծանօթութիւն.—Եթէ Վիճ. Կոնսիստորիայն ժողովրդէ՝ քահանայացուի ընտրութեան համար յարուցած խնդիրը թողնի առանց հետեւանքի, չունենալով օրինական հիմք, և կամ մինչև երկու շաբաթը, համաձայն 4-րդ յօդուածի, գործին ընթացք չտայ՝ ժողովուրդը կարող է բողոքել ս. Էջմիածնի Սինօդին:

5. Քահանայացուի ընտրութեան ժողովը հրաւիրում է տեղական գործակալը կամ նորա օգնականը Վիճ. Կոնսիստորիայի հրամանով: Գործակալը կամ նորա օգնականը բաց է անում ժողովը, նախ բացատրելով ժողովրդականներին ժողովի նպատակն և ապա առաջարկում է ընտրել ժողովի նախագահ և քարտուղար:

Ծանօթութիւն.—Ժողովի նախագահ կարող է ընտրուել նաև տեղական գործակալը կամ նորա օգնականը:

6. Ժողովը վաւերական է համարւում միայն այն դէպքում, երբ ներկայ է համայնքի և կամ, եթէ ծխաբաժանութիւն կայ, ծխականների կէսից աւելին, լինի առաջին ժողով թէ յաջորդ:

Ծանօթութիւն.—Ժողովի կանոնաւորութեան վերայ հսկող գործակալը կամ նորա օգնականը պարտաւոր է համայնքի ընտրութեան իրաւունք ունեցողների կամ իսկական ծխականների լրիւ ցուցակը ձեռքի տակ ունենալ:

7. Քահանայացուի ընտրութեան ժամանակ իւրաքանչիւր տնից կարող է ներկայ գտնուել միայն տան մի անդամը, որը 25 տարեկանից պակաս չպէտք է լինի. եթէ տան այր անդամը բացակայ է, կարող է կին անդամը մասնակցել ընտրութեան:

Ծանօթութիւն.—Իւրաքանչիւր իրաւասու ծխական կարող է ունենալ միայն մի աւելորդ ձայն օրինական հաւատարմագրով:

8. Քահանայացուն ընտրուած է համարւում, եթէ ստանում է $^2/_3$ ձայնի առաւելութիւն ներկայ եղողների:

Ծանօթութիւն.—Ընտրութիւնը կատարւում է գաղտնի կամ բաց քուէարկութեամբ, համաձայնութեամբ ժողովականների:

9. Եթէ քուէարկւում են երկու կամ աւելի թեկնածու, դիտութեամբ Վիճ. Կոնսիստորիայի, ընտրուած է համարւում նա, ով որ ստացել է ձայնի առաւելութիւն, իսկ ձայների հաւասարութեան դէպքում վիճակն է որոշում:

10. Եթէ քաղաքի կամ գիւղի համայնքը ծխաբաժանութիւն ունի, ժողովի են հրաւիրւում միայն այն ծխականները, որոնց համար պէտք է ձեռնադրուի քահանայացուն:

11. Քահանայացուի ընտրութեան համախօսական թերթն օրինական է համարւում, եթէ կազմուել և ստորագրուել է ժողովում քուէարկութիւնից յետոյ և վաւերացրած է գործակալի և ժողովի նախագահի ստորագրութեամբ ու կնքով, հակառակ դէպքում Վիճ. Կոնսիստորիայն յետ է ուղարկում գործակալին՝ պահանջուած կարգով կազմելու ընտրութեան թերթը:

Ծանօթութիւն.—Անգրագէտների տեղ ստորագրում է ժողովի քարտուղարը: Քահանայացուի ընտրութեան արձանագրութեան սկզբում գործակալի կամ նորա օգնականի ձեռքով յիշատակւում է Վիճ. Կոնսիստորիայի թոյլտուութեան մասին, նշանակելով թոյլտուութեան համարն և ամսաթիւը:

12. Ծխականները քահանայացուի ընտրութիւնից յետոյ նոյն ժողովում կամ երկրորդ ժողով կազմելով գործակալի կամ նորա օգնականի հրաւէրով, իբրև շարունակութիւն նախկին ժողովի, որոշում են նաև այն ամեն հասոյթը, ինչով որ պէտք է ապահովեն իրենց քահանայի ապրուստն և թէ քանի ծուխ է տրւում քահանային, եթէ ծխաբաժանութիւն կայ:

13. Գործակալը քահանայացուի ընտրութեան և ապահովութեան համար ժողովականների կազմած օրինական արձանագրութիւնները, ուսման, եթէ չի գտնւում Վիճ. Կոնսիստորիայում ծննդեան, ամուսնութեան, զինուորագրուչի և բժշկի (քահանայացուի առողջութեան համար) վկայականները, այլ և քահանայացուի համաձայնութեան ստորագրութիւնը, որ խոստանում է մինչև մահը, առանց տեղափոխութեան հարց անելու, մնալ այնտեղ, որի համար ընտրուած է, միասին ուղարկում է Վիճ. Կոնսիստորիային, իսկ եթէ ենթակայ է Հոգ. Կառավարութեան՝ վերջինիս միջոցով:

Ծանօթութիւն.—Եթէ քահանայացուն ընտրւում է գիւղի կամ քաղաքի ծեր քահանայի տեղ, գործակալը պէտք է Վիճաս-

կային Կոնսիստորիային ներկայացնի նաև ծեր քահանայի ստորագրութիւնը, որ կամովին խոպառ հրաժարւում է քահանայագործելուց։

14. Եթէ քահանայի մի որևէ անբուժելի հիւանդութեան դէպքում, որն արգելք է լինում նրան քահանայագործելու, ժողովուրդը յարուցանում է նոր քահանայ ունենալու խնդիր, պարտաւոր է նախօրօք օրինական կերպով ապահովել իւր հիւանդ քահանայի ապրուստը, հակառակ դէպքում նոր քահանայացուի խնդիրը մերժւում է Թեմական իշխանութեան կողմից։

15. Գործակալը Վիճակային Կոնսիստորիայից ստանալով քահանայացուի ընտրութեան հրամանը՝ մինչև մի ամիս պարտաւոր է օրինական ճանապարհով վերջ տալ քահանայացուի ընտրութեան գործին և անմիջապէս ուղարկել Վիճ. Կոնսիստորիային։

Բ. Քահանայի պատրաստութեան մասին.

16. Այն գիւղերը, որոնք ունին մինչև 300 տուն, պարտաւոր են իրենց քահանայացուն ընտրել այնպիսի անձն, որը գոնէ ունի երկդասեան ծխական կամ միջնակարգ դրպրոցի երկրորդ դասարանի աւարտման վկայական, բացի դրանից նաև այդպիսին պէտք է ենթարկուի լրացուցիչ քննութեան հետևեալ առարկաներից.

ա) Կրօնագիտութիւնից,—եկեղեցւոյ խորհուրդները, աստուածպաշտութեան կարգը, բ) Ծօնացոյցի գործածութիւնը, գ) Հայոց և եկեղեցական պատմութիւնից մանրամասն մինչև Ե-րդ դարն և համառօտ մինչև վերջը, դ) երգեցողութիւնից, շարականների և տաղերի անսխալ երգելը համաձայն հնի կամ ձայնագրեալ շարականի։

Ծանօթութիւն.—Գ-րդ դասարանի վկայական ունեցողներից նոյնպէս պահանջւում է լրացուցիչ քննութիւն համաձայն 16 րդ յօդուածի։

17. Աւաններում և փոքր քաղաքներում, որոնք ունին 300 տնից աւելի (մատաղաբաժնով), քահանայացուն պէտք է ունենայ առնուազն Թեմական դպրոցի չորրորդ

դասարանի աւարտման վկայական, առանց լրացուցիչ քննութեան։

18. Նահանգական և գաւառական մեծ քաղաքներում քահանայացուները պարտաւոր են ունենալ առնուազն թեմական դպրոցի աւարտման վկայական և նմանապէս չեն ենթարկւում լրացուցիչ քննութեան։

19. Քահանայացուները պէտք է 25 տարեկանից պակաս չլինեն ձեռնադրութեան ժամանակ և ոչ աւելի 45 տարեկանից։

20. Սարկաւագներից և ջահրնկալներից պահանջւում է նոյն պատրաստութիւնը, ինչ որ քահանայացուներից։

21. Սարկաւագ կարող են ձեռնադրուել 18 տարեկանից ոչ պակաս։

Գ. Քահանայացուներն ի՞նչ եղանակով պէտք է ձեռք բերեն ուսման վկայական, եթէ չունեն, եւ կամ ենթարկուեն լրացուցիչ քննութեան.

22. Իւրաքանչիւր անձն, ով կամենում է քահանայանալ և ուսման վկայական չունի, պարտաւոր է նախապէս ձեռք բերել այն, դրա համար քահանայացուն խնդրագրով դիմում է թեմական դպրանոցի կամ ս. Էջմիածնի Գ. ճեմարանի վարչութեան՝ խնդրելով իրեն ենթարկել քննութեան, յայտնելով թէ ո՞ր դասարանի, արդեօք Բ. թէ Դ. դասարանի 16-րդ յօդուածում յիշատակուած լրացուցիչ քննութեան հետ միասին, թէ միայն լրացուցիչ քննութեան, եթէ ունի Բ-րդ կամ Գ-րդ դասարանի աւարտման վկայական։

Ծանօթութիւն.— Ս. Էջմիածնի ճեմարանի կամ թեմական դպրոցի վարչութիւնը նախ քան քահանայացուին քննութեան ենթարկելը՝ յօդուտ դպրոցի ստանում է քաղաքի քահանայացուից տասը ռուբլի, իսկ գիւղի քահանայացուից հինգ ռուբլի, տալով նրանց անդորրագիր։ այդ վճարը յետ չէ տրւում քահանայացուին, եթէ քահանայացուն յետոյ չէ կարողացել իւր ցանկացած վկայականը ձեռք բերել իւր անպատրաստութեան պատճառով։

23. Ս. Էջմիածնի ճեմարանի կամ թեմական դպրոցի վարչութիւնը քահանայացուի խնդիրը ստանալուց յետոյ մինչև մի ամիսը նշանակում է քննութիւն և քննութիւնը կատարուում է յատուկ յանձնաժողովի միջոցով, որը բաղկացած պէտք է լինի դպրոցի տեսչից և այն առարկաների ուսուցիչներից, որոնցից պէտք է քննուի քահանայացուն, նոյնպէս և այլ ուսուցիչներից, որոնց տեսուչը կհրաւիրէ:

24. Քննութիւնից յետոյ յանձնաժողովը, եթէ արժանի է գտնում, քահանայացուին մինչև երեք օրը տալիս է համազատասխան ուսման վկայական, որտեղ գրւում են բոլոր առարկաներն և յառաջադիմութեան թուանշանները՝ ստորագրութեամբ ամբողջ յանձնաժողովի և վաւերացուցմամբ դպրոցական կնքի. իսկ եթէ ոչ՝ քահանայացուն ստանում է գրաւոր մերժումն:

25. Քահանայացուն կարող է ժամանակի ընթացքում զանազան թեմական դպրոցներում քննութիւն տալ: Եթէ մի տեղ քննութիւն է տուել և վճարել, բայց անյաջող է անցել, նոյն տեղը կամ մի ուրիշ տեղ քննութիւն տալիս նորից է վճարում պահանջուած գումարը:

26. Պետական դպրոցներում սովորած քահանայացուները ենթարկւում են լրացուցիչ քննութեան, համաձայն 16, 17 և 18-րդ յօդուածների: